ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2024թ.

Քաղ. Միսակ Մարկոսյանին
ք.Երևան 0004, Մալաթիա Սեբաստիա
Բաբաջանյան փողոց157/24
էլ.հասցե՝ misakmmm100@mail.ru

Ձեր 09.02.2024թ. թիվ 1045659 դիմումին.

Լոռու մարզպետարանում քննարկվել է Ձեր դիմումում բարձրացված հարցերը, ինչի վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.

1988 թվականի դեկտեմբերի 7-ի երկրաշարժի հետևանքով բնակարան կորցրած ընտանիքների բնակապահովման ծրագրի շրջանակներում շահառու են ճանաչվել 1650 ընտանիք, որից Վանաձոր համայնքում՝ 22-ը, Սպիտակ համայնքում 249-ը, Ստեփանավանում՝ 47-ը: Լոռու մարզի 33 գյուղական բնակավայրերում շահառու ընտանիքների թիվը եղել է 1332 է:

Բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեին Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող և տվյալ բնակավայրում հաշվառված ու մշտական բնակություն հաստատած այն անձինք ու նրանց ընտանիքի անդամները, որոնց բնակելի տները երկրաշարժի հետևանքով քանդվել կամ 2008 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ բնակելի տան տեխնիկական վիճակի վերաբերյալ մասնագիտացված կազմակերպության կողմից տրված եզրակացության համաձայն ենթակա են եղել քանդման: ՀՀ Կառավարության 11.09.2008թ. թիվ 1024-Ն որոշման 1 կետի համաձայն աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների վերահաշվառման վերջնաժամկետ էր սահմանվել 2008 թվականի նոյեմբերի 1-ը (Նշված ժամկետում որոշ ընտանիքների կողմից համայնքի ղեկավարին չի ներկայացվել համապատասխան փաստաթղթերը, որի պատճառով դուրս են մնացել ծրագրից):

2022թ. ավարտվել է «Ֆուլեր տնաշինական կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող 153 շահառու ընտանիքների բնակելի տների շինարարական աշխատանքները (Ծրագիրն ամբողջությամբ ավարտվել է):

Բնակապահովման իրավունքները դատական կարգով վերականգնվում է, որի արդյունքում ընտանիքներին բնակարանային պայմանների բարելավման նպատակով հատկացվում է ֆինանսական աջակցություն, ինչպես նաև բնակարանի գնման վկայագրեր (ԲԳՎ)՝ բնակարան ձեռք բերելու նպատակով:

Ներկայումս բնակապահովման իրավունքը դատական կարգով վերականգնվել է Լոռու մարզի գյուղական բնակավայրերում շահառու ճանաչված 37 ընտանիքի կողմից, որոնց ԲԳՎ-ի տրամադրման գործընթացը կիրականացվի 2024թ.:

Միաժամանակ տեղեկացնում եմ՝ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված պետական աջակցության ծրագրի ավարտից հետո աղետի գոտու բնակավայրերում դեռևս մնում են չլուծված ոչ հիմնական

կատ. Հ.Տեր-Պողոսյան
հեռ. /0322/ 2-31-02

շինություններում/տնակներում ապրող քաղաքացիների բնակարանային խնդիրները: Խնդիրը ներառվել է Կառավարության գործունեության 2021-2026 թվականների միջոցառումների ծրագրում:

Այս ծրագրով ևս կկանոնակարգվի երկրաշարժից հետո տեղադրված (կառուցված) ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքների վերաբնակեցումը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ կան երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներ, ովքեր դուրս են մնացել բնակապահովման ծրագրից (դեռևս դատական կարգով ընթանում է վերակագնման գործընթացները) Ձեզ թվային ստույգ տվյալներ չենք կարող տրամադրել:

13/02/2024

X

ԱՐԱՄ ՂԱՁԱՐՅԱՆ

Մ Ա Ր Զ Պ Ե Տ Ա.ՂԱՁԱՐՅԱՆ

կատ. Հ.Տեր-Պողոսյան
հեռ. /0322/ 2-31-02